

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ

1989 թ. օգոստոսի 20—25 օրերին Ժնևի մերձակայքում գտնվող Սելիգի գյուղի Էկումենիկ ինստիտուտում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 7-րդ համագումարը կազմակերպող հանձնաժողովի հավաքը, որին Հայ Եկեղեցու կողմից մասնակցում էր ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեի անդամ, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: Ժողովի օրակարգում դրված գլխավոր հարցը ԵՀԽ-ի առաջիկա 7-րդ համագումարի ծիսական բաժնի հոգևոր երգերի ցանկի կազմությունն էր: Հանձնաժողովին ներկայացված ավելի քան 350 հոգևոր երգերից ընտրվեցին 84-ը, որոնց մաս կազմեցին, առաջին անգամ լինելով, Հայց. Եկեղեցու կողմից առաջադրված երեք հոգևոր երգեր: Դրանցից առաջինը հայրենի երգահան Տիգրան Մանսուրյանի նոր հորինած մեկ գործն է: Այն գրված է համագումարի թեմայի բառերի վրա, նվիրված Սուրբ Հոգուն, և կատարվելու է որպես համագումարի հիմնը: Մյուս երկուսը հայոց պատարագից են՝ Եկմալյան պատարագից «Հայր մեր»-ը և Կոմիտասյան պատարագից՝ «Տէր, ողորմեա»-ն:

Այնուհետև Տ. Ներսես արքեպիսկոպոսը Ցյուրիխի շրջանում հանդիպումներ ունեցավ վերակազմյալ բողոքական Եկեղեցիների «Հեքս» բարեսիրական ընկերության ներկայացուցիչների հետ: Հիշյալ կազմակերպությունը, ըստ նախօրոք կազմված ծրագրի, առանձին հանդիպումներ էր կազմակերպել շրջանի եկեղեցական տարբեր ծուխերի հետ: Առաջին հանդիպումը տեղի ունեցավ սեպտեմբերի 4-ին Լենդքըրք գյուղի ծխական եկեղեցու ներկայացուցիչների հետ, որոնք, տեղի համայնքի անունից, բարի գալուստ մաղթեցին սրբազան հորը և նրան ուղեկցող «Հեքս»-ի ներկայացուցիչ Ինգե Շադլերին: Եկեղեցում տեղի ունեցած երեկոյան հոգևոր պաշտամունքից հետո Տիկին Շադլերը, որը երկու անգամ եղել էր Հայաստանում տարերային աղետի կապակցությամբ, ներկայացրեց սրբազան հորը եկեղեցում հավաքված ժողովրդին, ապա, որպես ականատես, մանրամասն տեղեկություններ տվեց այն վիճակի մասին, որ ներկայումս տիրում է երկրաշարժից աղետյալ շրջաններում: Այս առթիվ ցուցադրվեցին սահիկներ երկրաշարժի պատճառած ավերումները պատկերող: Այնուհետև Ներսես արքեպիսկոպոսը խոսեց հայ ժողովրդին պատուհասած աղետի և ավերված քաղաքների ու գյուղերի վերականգնման ուղղությամբ ներկայումս կատարվող աշխատանքների ընթացքի մասին՝ Հայ Եկեղեցու անունից շնորհակալություն հայտնելով շվեյցարացի ազնիվ ժողովրդին նրա ցուցաբերած անշահախնդիր օգնության համար:

Հետևյալ օրը, առավոտյան ժամը 11-ին, սրբազան հայրը Տիկին Շադլերի հետ մեկնեց Քուր քաղաք, ուր պաշտոնական հանդիպում ունեցավ քաղաքագլուխ դոկտ. Ռոլֆ Ստիֆլերի և տեղի եկեղեցական, քաղաքային իշխանությունների, ինչպես նաև մամուլի և ռադիոյի աշխատողների հետ: Հանդիպման սկզբին ողջույնի և բարիգալստյան խոսքերից հետո քաղաքագլուխ դոկտ. Ստիֆլերը, անդրադառնալով Հայաստանի աղետին, թարգմանը հանդիսացավ ծանր փորձության ենթարկված հայ ժողովրդի նկատմամբ ողջ շվեյցարացի ժողովրդի արտակցության՝ նշելով, որ դրա վառ ապացույցներից մեկն էր այն, որ տարերային աղետից անմիջապես հետո Քուր

քաղաքից շվեյցարացի ժողովրդի դուստր Լորի Բեթինան օգնության էր փութացել՝ փլատակների տակից վիրավոր իր հայ եղբայրներին ազատելու համար: Իր խոսքի վերջում քաղաքագլուխն արտահայտվեց շվեյցարացի և հայ ժողովուրդների համերաշխության և բարեկամական կապերի հետագա ամրապնդման անհրաժեշտության մասին:

Այնուհետև հանդես գալով պատասխան խոսքով՝ Տ. Ներսես արքեպիսկոպոսը նախ ներկաներին տեղեկություններ հաղորդեց անհավոր երկրաշարժի պատճառած վնասների մասին, ապա ամփոփ գծերի մեջ ներկայացրեց պատկերն այն վերաշինական աշխատանքների, որոնք ներկայումս կատարվում են աղետի գոտում օտար կրոնական և բարեսիրական կազմակերպությունների օժանդակությամբ: Վերջում սրբազանը շնորհակալություն հայտնեց շվեյցարացի ժողովրդին՝ նշելով, որ երախտագետ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա նրա նվիրյալ զավակների մարդասիրական օգնությունն ու անձնվեր ծառայությունը իր ազգի տարբեր դժբախտ բեկորներին՝ սկսած առաջին համաշխարհային պատերազմի ծանր տարիներից:

Հավարտ հանդիպման սեղմ շրջանակում տրվեց ճաշկերույթ քաղաքագլխի կողմից:

Նույն օրը Տ. Ներսես արքեպիսկոպոսը Տիկին Ճադլերի ուղեկցությամբ գնացքով մեկնեց դեպի Ռեբշտեյն գյուղ, որտեղ նրան դիմավորեց և բարի գալուստ մաղթեց տեղի բողոքական եկեղեցու հովիվ Պոլ Զոլլերը: Երեկոյան ժամը 20-ին եկեղեցու սրահում տեղի ունեցավ հանդիպում տեղի համայնքի հավատացյալների հետ: Այստեղ ևս հոգևոր հովվի ողջույնի և բարիգալստյան խոսքերից հետո Տիկին Ճադլերը հավատացյալներին ներկայացրեց սրբազան հորը՝ նշելով նրա, որպես Մայր Աթոռի ներկայացուցչի, գործակցությունը «Հեքս» կազմակերպության հետ Հայաստանի աղետյալների օգնության գործում: Այնուհետև ցուցադրվեցին Հայ Եկեղեցու պատմաճարտարապետական հայտնի կոթողները, ինչպես նաև աղետյալ շրջանների վիճակը պատկերող սահիկներ՝ համապատասխան բացատրություններով:

Այնուհետև ելույթ ունեցավ Տ. Ներսես արքեպիսկոպոսը՝ համառոտակի խոսելով հայ ժողովրդի քրիստոնեության դարձի, հանուն իր ազատության և քրիստոնեական հավատի պահպանման նրա կրած բազում փորձությունների, 1915 թվականի հայկական ցեղասպանության, ինչպես նաև դեկտեմբերի 7-ի երկրաշարժի պատճառած ավերածությունների և այդ կապակցությամբ շվեյցարական կրոնական և բարեգործական կազմակերպությունների ցուցաբերած օգնության մասին: Սույն հավաքույթին ներկա էին նաև Իրանից և Թուրքիայից գաղթած մի խումբ հայեր: Հանդիպման ավարտին սրբազան հայրը պատասխանեց իրեն ուղղված մի շարք հարցերի և աղոթքով փակեց հավաքույթը: Նույն օրը, երեկոյան ժամը 22-ին, Տ. Ներսես արքեպիսկոպոսը Ռեբշտեյնից վերադարձավ Ցյուրիխ:

Սեպտեմբերի 5-ին, առավոտյան, Մայր Աթոռի դիվանապետը այցելեց Ցյուրիխի տեսարժան վայրերը «Հեքս» կազմակերպության ներկայացուցիչ, հոգևոր հովիվ Ֆրանց Ծյուլեի հետ: Ժամը 12.30-ին տեղի ունեցավ խորհրդակցական հանդիպում Ցյուրիխի բողոքական եկեղեցու խորհրդի նախագահի և անդամների հետ Հայաստանի աղետյալ շրջաններում վերաշինական աշխատանքների գծով նախատեսվող օգնության ծրագրի կազմության վերաբերյալ:

Հետ միջօրեին սրբազանը Ֆրանց Ծյուլեի ուղեկցությամբ մեկնեց Արգո նահանգի Լենցբուրգ քաղաք՝ մասնակցելու շրջանի սինոդի ժողովին, որին մասնակցում էին նահանգի ողջ ծուխերը ներկայացնող շուրջ 120 հոգևորական և աշխարհական անդամներ: Հոգևոր հովիվ Ֆրանց Ծյուլեն ներկաներին ներկայացրեց Սուրբ Էջմիածնից ժամանած բարձրաստիճան հյուրին, ապա խոսք տվեց նրան: Այստեղ ևս Տ. Ներսես արքեպիսկոպոսը իր ելույթի մեջ անդրադարձավ հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու պատմությանը՝ նշելով, որ հայ ժողովուրդը առաջինն էր, որ 301 թվականին ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, այնուհետև խոսեց հանուն Քրիստոսի Եկեղեցու հայ ազգի մղած անհաշիվ պայքարների ու նրա կրած ծանր փորձությունների մասին՝ իր խոսքի վերջում հատկապես կենտրոնանալով 1988 թ. դեկտեմբերի 7-ի անհավոր երկրաշարժի ողբերգական հետևանքների վրա:

Ժողովի ավարտին ասուլեղ նույնպես ցուցադրվեցին Հայաստանի աղետին վերաբերող սահիկներ:

Սեպտեմբերի 7-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, «Կրոնե» հյուրանոցի սրահներից մեկում «Հեքս»-ի ներկայացուցիչներ Ինգե Ճադլերը և Թիլդի Հանկարտը կազմակերպել էին հարցազրույց Մայր Աթոռի ներկայացուցչի հետ: Հարցազրույցին մասնակցում էին Ցյուրիխ քաղաքի և շրջակայքի կարևոր թերթերի թղթ-

թակիցներ, ինչպես՝ «Նոյե», «Զյուրիխեր Ցայտունգ», «Վետտեր», «Ստադտ Կանտոն Զյուրիխ» և այլն, ինչպես նաև տեղական ռադիոյի աշխատակիցներ: Հարցազրույցի ընթացքում Տ. Ներսես արքեպիսկոպոսը հիմնականում անդրադարձավ տարերային աղետի ծանր հետևանքների, շվեյցարական և այլ եկեղեցական, բարեսիրական կազմակերպություններից ստացված գործնական օգնության և ներկայումս ամբողջ հայ ժողովրդին հուզող Ղարաբաղյան հարցին: Ապա պատասխանեց իրեն ուղղված մի շարք լրացուցիչ հարցերի:

Նույն օրը, հետ միջօրեին, արքազանը, ընկերակցությամբ «Հեքս»-ի ներկայացուցիչ Ինգե Ցադլերի, մեկնեց Ցվեյցարիայի մայրաքաղաք Բեռն, որտեղ նախ այցելեց Մայր տաճար, ապա հանդիպում ունեցավ Ցվեյցարիայի բողոքական Եկեղեցիների ֆեդերացիայի նախագահ պաստոր Հենրիխ Ռուստեր Հոլցի և նրա գործակիցների հետ: Ջերմ ու սիրալիր մթնոլորտում տեղի ունեցավ զրույց, որի ընթացքում Տ. Ներսես արքեպիսկոպոսը խոսեց Հայ Եկեղեցու կատարած դերի մասին հայ ժողովրդի կյանքի ամենաբախտորոշ ժամանակաշրջաններում: Անդրադառնալով վերջին շրջանի դեպքերին՝ նա ներկաների ուշադրությունը հրավիրեց հատկապես 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով հայրենի երկրում ստեղծված ծանր կացության վրա: Ապա վերստին շնորհակալություն հայտնեց շվեյցարացի ժողովրդին նրա մատուցած բարեսիրական ծառայությանց համար՝ սկսած հայկական ցեղասպանության օրերից մինչև տարերային աղետի այս շրջանը:

Նույն գիշերը Տ. Ներսես արքեպիսկոպոսը վերադարձավ Ժնև:

Հետևյալ օրը, սեպտեմբերի 8-ին, առավոտյան, ընկերակցությամբ Ժնևի հայոց հոգևոր հովիվ Տ. Վիգեն վարդապետ Այքազյանի, արքազանն այցելեց Ժնևի կանտոնի հեռուստատեսության կենտրոն, որտեղ տեղի ունեցավ հարցազրույց:

Այնուհետև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնում, Ցվեյցարիայի փոխօգնության կազմակերպության ներկայացուցիչ Կլոդին Մեյլանի նախաձեռնությամբ, տեղի ունեցավ մամլո ասուլիս, որին մասնակցում էին տեղական տարբեր թերթերի ներկայացուցիչներ: Այս առթիվ Տ. Ներսես արքեպիսկոպոսը խոսեց Հայաստանում տեղի ունեցած տարերային աղետի կապակցությամբ միջեկեղեցական օգնության կազմակերպման գործում ԵՀԽ-ի կատարած կարևոր դերի մասին՝ հանգամանորեն անդրադառնալով «Կարիտաս» միջազգային բարեսիրական կազմակերպության, «Հեքս»-ի և Արևմտյան Եվրոպայի ուղղափառ, կաթոլիկ և ավետարանական Եկեղեցիների կողմից ցուցաբերված նյութական օգնությանը: Ասուլիսի ընթացքում արքազան հորը հարցեր տրվեցին Խորհրդային Միությունում իրականացվող քաղաքական, ընկերային և տնտեսական վերափոխումների, ղարաբաղյան հարցի, խղճի ազատության վերաբերյալ հրատարակված նոր օրենսդրության, ինչպես նաև նոր եկեղեցիների վերաբացման մասին: Հետևյալ օրը տեղական հայտնի թերթեր, ինչպես՝ «Լա Սուիս», «Ժուռնալ դը Ժնև», առանձին հոդվածներով և հաղորդումներով արձագանքեցին սույն ասուլիսին:

Ավելի ուշ, ժամը 12-ին, Տ. Ներսես արքեպիսկոպոսը պաշտոնական այցելություն տվեց ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոյին իր պաշտոնատեղում և մտերմիկ զրույց ունեցավ նրա հետ: Ի շարս այլ հարցերի դոկտ. Էմիլիո Կաստրոն անդրադարձավ նաև հայկական ցեղասպանության հարցին՝ նշելով, որ ԵՀԽ-ի քարտուղարությունը վերջերս Վաշինգտոնի և Ցվեյցարիայի թուրքական դեսպանատներից ստացել է բողոքի նամակներ, որոնցում փորձ է արվում հակազդելու այս տարվա մայիս ամսին Տեխասի նահանգի Սան Անտոնիո քաղաքում ԵՀԽ-ի «Առաքելություն և Ավետարանչություն» հանձնաժողովի համաժողովում հայկական ցեղասպանության ճանաչման մասին ընդունված որոշմանը, որը հաստատվեց սույն թվականի հուլիս ամսին Մոսկվայում գումարված ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի նստաշրջանում: ԵՀԽ-ի քարտուղարությունը, ինչպես հավաստեց դոկտ. Էմիլիո Կաստրոն, արդեն պատասխանել է այդ զույգ բողոքագրերին՝ հորդորելով նրանց հեղինակներին, որ աշխատեն համոզել իրենց երկրի ղեկավարությանը՝ առաջիկա տարի, հայոց ցեղասպանության 75-ամյակի առթիվ, իբրև քաղաքակիրթ ժողովուրդ, ճանաչելու «Երիտասարդ թուրքերի» կառավարության կողմից ծրագրված և գործադրված 1915 թվականի անմարդկային ցեղասպանության ակտը և ցավ հայտնեն կատարվածի մասին:

Ցվեյցարիայում գտնվելու օրերին Տ. Ներսես արքեպիսկոպոսն ունեցավ նաև այլ հանդիպումներ մի շարք գործնական հարցերի շուրջ: Օգոստոսի 31-ին նա հանդիպում ունեցավ Արևմտյան Գերմանիայի

Շտուտգարդ քաղաքում հաստատված Սուրբ Գրոց ընկերության Եվրոպայի մասնաճյուղի նախագահ դոկտ. Մոյերի հետ: Հանդիպման ընթացքում շոշափվեց Ս. Էջմիածինը մի նոր արդիական տպարանով օժտելու հարցը: Կարծիքներ փոխանակվեցին նաև Հայաստանում Աստվածաշնչական ընկերության մի մասնաճյուղ հաստատելու, ինչպես նաև մոտ ապագայում Աստվածաշնչի 20.000 տպագիր օրինակ Հայաստան ներմուծելու հնարավորության մասին:

Սեպտեմբերի 1-ին սրբազանը հանդիպում և զրույց ունեցավ ԱՄՆ-ի «Կարիտաս» բարեսիրական կազմակերպության պատասխանատու տնօրեն պրն. Քուինլենի հետ: Զրույցի ընթացքում խոսվեց այն համաձայնագրի մասին, որ ստորագրվել էր Երևանում 1989 թ. հունիս ամսին պրն. Քուինլենի և Հայր Թոմասի Հայաստան այցելության առթիվ: Պր. Քուինլենը վստահեցրեց, որ, ըստ վերոհիշյալ պայմանագրի, մոտ ապագայում ամերիկյան «Կարիտաս» կազմակերպությունը Երևանում կհաստատի նորածին երեխաների համար սննդի արդյունաբերության մի ֆաբրիկա:

Օգտվելով Ժնևում գտնվելու առիթից՝ Տ. Ներսես արքեպիսկոպոսը օգոստոսի 20-ին, 27-ին և սեպտեմբերի 3-ին ներկա եղավ Ժնևի հայոց Ս. Հակոբ եկեղեցում մատուցված կիրակնօրյա պատարագներին և Բանին կենաց քարոզությամբ մխիթարեց տեղի հայ համայնքի հավատացյալներին:

ԹՂԹԱԿԻՑ